

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Տ. ԱՐՇԱԿ ԱՔԵՂԱՅ ՂԱԶԱՐԵԱՆ

Աւագանի անունով Ռաֆիկ, ծնած է 27 Յուլիս, 1992-ին, Հայաստան, Արմաւիրի շրջանի Արշալոյս գիւղին մէջ: Զաւակն է Վարդան եւ Լուսիա Ղազարեաններու:

1998-2008 թթ. նախնական կրթութիւնը ստացած է Արշալոյսի Սամուէլ Գրիգորեանի անուան դպրոցը:

2005-2008 թթ. ծառայած է Արշալոյս գիւղի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ մէջ:

2009-ին ընդունուած է որպէս ուսանող Երուսաղէմի Ժառանգաւորաց Վարժարան:

2011 Մարտ 1-ին Դպիր կը ձեռնադրուի Լուսարարապետ՝ Տ. Սեւան Արք. Ղարիպեանի ձեռամբ:

2017-ին կ'աւարտէ Ընծայարանի եռամեայ բաժինը եւ Սարկաւագ կը ձեռնադրուի ձեռամբ Ամենապատիւ Տ. Նուրհան Արք. Մանուկեան Պատրիարքի: Նոյն թուականէն ցայսօր կը ծառայէ Սուրբ Թէոդորոսի (Թորոս) Զեռագրատան մէջ:

2018-էն կը դասաւանդէ Ժառանգաւորաց Վարժարանէն ներս իբրեւ «Վարք Սըրբոց» եւ «Երուսաղէմի պատմութիւն» առարկաներու ուսուցիչ:

2019-ի Նոյեմբեր 17-ին, ձեռնադրուած է կուսակրօն եկեղեցական: